

Թրքական կառավարութիւնը մէկ դարու անընդհատ կռիւններէն յետոյ՝ Ղըզըլբաշ քիւրտներու ուժը կը կոտորէ եւ միջին նահանգներուն տէր կը դառնայ: Այսպէս, հետզհետէ զօրացընելով իր իշխանութիւնը արեւելեան նահանգներու մէջ, Թրքական կառավարութիւնը իր ուշադրութիւնը դարձուց դէպի Քիւրտիստանի կէս անկախ իշխանապետութիւնները: Ու մենք քիչ վերջը պիտի տեսնենք որ 18-րդ դարու համեմատական հանդիստէն յետոյ, Թուրքերու յարձակողական գործողութիւնները 19-րդ դարու սկզբին, նորէն հայ ժողովուրդը կը մատնէին Թուրք-բրտական երկու կրակին:

2.

Հայերու եւ քիւրտերու համակենցաղի երկրորդ եւ ամենէն կարեւոր շրջանակը բուն Քիւրտիստանը եւ արեւելեան Տաճկահայաստանն է: Հայերը, փաստօրէն, քիւրտերու հըւպատակ կը դառնային 16-րդ դարու սկզբէն. իսկ իրաւականօրէն՝ Թրքական գերիշխանութեան տակն էին: Այս կրկնակ լուծին տակ ճգնուած հայ ժողովուրդը, անշուշտ, անմըտունչ չտարաւ այդ ծանր բռնութիւնը. բայց պատմական արձանագրուած տուեալները կը պակսին մեզի, անոնց բնոյթը որոշելու համար*): Մանաւանդ 17-րդ եւ 18-րդ դարերու

*) Գրիգոր Կաթողիկոս Աղքատարցու տալերէն մէկը, որ հրատարակուած է Պալեան եպիսկոպոսի «Հայ Աշուղներ»ու երկրորդ հատորին մէջ, յիշատակութիւն մը կ'ընէ քիւրտերու մասին, ինչ որ ցոյց կուտայ թէ 16-րդ դարուն հայութիւնը արեւելեան շրջաններու մէջ ալ բաւական նեղութիւններ կրած է քրտական յարձակումներէն: Գրիգոր Աղթամարցու ոտանաւորը բոլորովին այլ նիւթեր կը շօշափէ, ու վերջին տունը որ թուականի յիշատակութեան յատկացուած է, հետեւեալ ձեւով կ'ընդգծէ ժամանակագրութիւնը.—

«Տոմար հայոց ինը հարիւր, Եօթանասուն հինգ եւ այլ իւր, Հագարացիք աւրիւսաք թիւր, Հալաձեն զագգս ի հուր»:

Հագարացիք քիւրտերն են, որոնք 16-րդ դարու երկրորդ կէսին Վանի եւ Մշոյ շրջանները կը տարածուէին, մասնաւորապէս ամառուան եղանակին:

կեանքը մութ քօղով մը ծածկուած կը մնայ:

16-րդ դարու սկզբին, սուլթան Սէլիմի եւ քիւրտ իշխանապետութեանց միջեւ կայացած դաշնագրութեամբ շարք մը շրջաններ կիսանկախ կը յայտարարուէին: Թրքական կառավարութիւնը հետագայ դարերուն կրցաւ այդ դաւաններէն ոմանք իր անմիջական իշխանութեան ենթարկել, որով քրտական իշխանապետութիւններու սահմանները, դարերու ընթացքին, փոփոխութեան ենթարկուեցան, եւ շարք մը այլ կեղերոններ ստեղծուեցան: Այսպէս, երբ 1800-ական թուականներու շարք մը յիշատակութիւններուն ուշ կը դարձնենք, կը տեսնենք որ Քիւրտիստանը եւ Տաճկահայաստանը բաժնուած են ութը փաշայլղներու:

Ամէնզէ Ժօրէս**)) իր «Ճամբորդութիւն Հայաստանի եւ Պարսկաստանի մէջ» գրքով կը յայտնէ թէ Բայազիտ, Մուշ, Վան, Գարա-Չօլան (Տէրսիմի շրջան) ձիւլամերկ, Չախօ, Ամատիա եւ Սուլէմանիյէ քրտական փաշայլղներ էին: Իսկայէս ալ 19-րդ դարուն վերը յիշուած ութը քրտական իշխանապետութիւնները տիրական դիրք մը ունէին, որոնց դէմ Թուրքիա լարեց իր ուժերը:

Հայերը, վերը յիշատակուած ութը փաշայլղներու մէջ թէեւ ենիչէրիներու եւ Ջալալիներու անիշխանական աւերմունքներուն ենթա-

**)) P. Amedee Jaubert 1805-ին Նարոյէոնի հրամանով ճամբորդութիւն մը կը կատարէ դէպի Թուրքիա եւ Պարսկաստան, թէեւ գիտական ուսումնասիրութեան անուան տակ, բայց քաղաքական նպատակներով: Հեղինակը իր «Voyage en Arménie et en Perse»-ի մէջ կը յայտնէ որ այդ թուականներուն Անգլիա եւ Ռուսաստան Ծրանսայի դէմ համաձայնութիւն մը կնքած էին: Պարսից Շահը նամակ մը գրած է Նարոյէոնին եւ իր բարեկամութիւնը առաջարկած է Ծրանսային, ընդգէմ անդլօ-ուսուական միութեան: Այդ նամակը Պոլսէն հայ մը բերած է Փարիզ: Սակայն այդ նամակի ստուգութիւնը եւ Շահի առաջարկներու արժէքը խնդրոյ առարկայ էին, նկատի ունենալով որ կանոնաւոր դիւանագիտական յարաբերութիւններ գոյութիւն չունէին: Այդ իսկ պատ-